



Մեկնարկող ծրագիրը բնական աղետների դեմ պայքարի միջազգային եւ տարածաշրջանային համագործակցության լավ օրինակ



Սեպտեմբերի 12-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուզետտոն ստորագրել են փաստաթուղթ, որով նախատեսվում է սկսել Ռուսաստանի Դաշնության ֆինանսավորմամբ «Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմումն անտառային և դաշտային հողեհների կառավարման ներուժի զարգացման միջոցով» ծրագրի իրականացումը: ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իվան Վոլինկինը նույնպես ներկա էր ստորագրման պաշտոնական արարողությանը: Միջոցառմանը հրավիրված էին ՀՀ արտակարգ իրավիճակների, գյուղատնտեսության նախարարությունների պատասխանատուներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Եռամյա ծրագրի բյուջեն կազմում է 1 միլիոն ԱՄՆ դոլար: Ողջունելով ներկաներին՝ ՀՀ բնապահպանության նախարարն իր խոսքում նշել է. «Այս միջոցառմամբ փաստում ենք այն հանգամանքը, որ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված հողեհները մեղմելու գործընթացը համախմբում է բոլորիս: Մեր անտառային տարածքներում, տարածաշրջանում և ընդհանրապես աշխարհում արձանագրված հողեհները միավորել են միջազգային ջանքերը՝ պայքարելու նման աղետների դեմ: Ասվածի համատեքստում, լիովին օրինաչափ է, որ ներկայումս մեզ համար սկզբունքային նշանակություն ունեցող կենսաբազմազանության և կանաչ տարածքների պահպանությունը, որ առաջին հերթին մեր կառավարության հիմնական գերակայություններից է, դառնում է նաև այսպիսի տեխնիկական աջակցության հիմք»: Շնորհակալություն հայտ-

նելով Ռուսաստանի Դաշնությանը տրամադրած աջակցության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրին՝ այս և նման այլ բնապահպանական ծրագրերն արդյունավետ իրականացնելու համար՝ բնապահպանության նախարարը ներկայացրել է ծրագրի հիմնական բաղադրիչները: Նախաձեռնությունը նպատակ ունի բարելավել օրենսդրական դաշտը և կիրարկել համապատասխան քաղաքականությունը, հզորացնել վաղ նախագուշացման և մշտադիտարկման համակարգերը, ինչպես նաև հստակեցնել համապատասխան կառույցների դերերը և պարտականությունները իրենց լիազորությունները իրականացնելու համար: Ծրագիրը նաև ազգային և տարածաշրջանային շահառու մարմիններին կտրամադրի ժամանակակից սարքավորումներ և տեխնոլոգիա, ինչպիսիք են հողեհվող և անվնաս անտառների ու դաշտերի միջև խորը բուֆերային խրամատներ փորելու տեխնիկական միջոցները, ուսապարկ-պոմպերը և հողեհամարիչ սարքերը՝ նախատեսված մակերեսային հողեհները մարելու, ինչպես նաև պաշտպանիչ համազգեստներ հրշեջների առողջությունն ու անվտանգությունն ապահովելու համար: Ծրագրի շրջանակներում կաջակցվեն և կխրախուսվեն անտառային և դաշտային հողեհների մեղմման ու կանխմանն ուղղված այլընտրանքային ձեռնարկները և նորարարական մոտեցումները: Արծվիկ Մինասյանը կարևորել է հատկապես վաղ հայտնաբերման և հակահրդեհային միջոցառումների իրականացման նորարարական մոտեցումները:

• Մեկնարկող ծրագիրը բնական աղետների դեմ դայֆարի միջազգային և սարածաւառջանային համագործակցության լավ օրինակ

Սկիզբը՝ էջ 1 /

Ծրագրով նախատեսված միջոցառումները հնարավորություն կտան լիազոր կառույցներին և տեղական ինքնակառավարման մարմիններին համակարգված ներգրավվել աղետների կանխարգելման և վերացման գործընթացին: Մեկնարկող ծրագիրը կլրացնի ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրով արդեն իսկ իրականացվող Հայաստանի անտառակառավարման բարելավմանն ուղղված ծրագրերը: Ավարտելով իր խոսքը Ա. Մինասյանը շնորհակալություն է հայտնեց բոլոր երկրներին, կառույցներին, կազմակերպություններին և անհատներին՝ հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցելու համար, մասնավորապես ՌԴ-ին՝ Հայաստանի խնդրանքին արագ արծագանքելու և ինքնաթիռ տրամադրելու, և ԱՄՆ-ին՝ այրված տարածքների վերականգնողական գործընթացին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու համար: ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուզետտոն արձանագրել է, որ մեկնարկող ծրագիրը բնական աղետների դեմ պայքարի տարածաշրջանային ու միջազգային համագործակցության լավ օրինակ է և շնորհակալություն է հայտնել ՌԴ-ին ՄԱԿ-ի շրջանակներում արդյունավետ համագործակցության համար: Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Իվան Վոլինսկին էլ նշել է. «ՌԴ-ն հետևողականորեն մեծացնում է իր ջանքերը կայուն զարգացման ձեռքբերման նպատակով արտասահմանյան գործընկերներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ՝ առաջնորդվելով այն նպատակներով, խնդիրներով և սկզբունքներով, որոնք նախանշված են ՌԴ պետական քաղաքականության կոնցեպտում և նպատակ ունենալով նպաստել միջազգային զարգացմանը: Առաջնային ուղղությունների թվում են ԱՊՀ և Եվրասիական տնտեսական միության երկրները, որոնք ավանդաբար ունեն սերտ տնտեսական, քաղաքական և մշակութային կապեր մեր երկրի հետ: ՌԴ ֆինանսական միջոցներով Հայաստանում իրականացվում են բազմաթիվ ծրագրեր: Աջակցություն են ստանում, ոչ միայն առանձին սոցիալական խմբերը, այլ նաև տնտեսության առանձին ճյուղեր: Անտառային տնտեսության ֆեդերալ բյուրոն և ՌԴ ԱԻՆ ծառայությունները կունենան անմիջական մասնակցություն այս ծրագրի իրագործմանը»: Շեշտելով, որ Ռուսաստանը և Հայաստանը դժվար իրավիճակներում միշտ միմյանց օգնել են՝ դեսպանը համոզմունք է հայտնել, որ, մեկնարկող ծրագիրը կնպաստի Հայաստանի և ՌԴ-ի ռազմավարական գործընկերության հետագա ամրապնդմանը և թույլ կտա նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակները հանրապետությունում: Միջոցառման ժամանակ ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուզետտոն «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Գերասիմ Վարդանյանին է հանձնել ռադիոկապի միջոցներ, որոնք արտակարգ իրավիճակներում առաջնային անհրաժեշտություն էին, և որի պակասն իրեն զգացնել էր տվել արգելոցում հրդեհի բռնկման ժամանակ:

Տեղեկանք

Հայաստանի սակավամտառ պաշարները հաճախ գտնվում են ինտենսիվ մշակվող գյուղատնտեսական հողահանդակների և մարգագետինների մոտ՝ ենթարկվելով մարդու և կլիմայի փոփոխության ազդեցություններին: Օդի ջերմաստիճանի կանխատեսվող բարձրացումը և տեղումների փոփոխությունը, ըստ կլիմայի փոփոխության երրորդ ազգային հաղորդագրության, էլ ավելի կբարձրացնի երկրի չորայնության աստիճանը: Վեջինս էլ, իր հերթին, կավելացնի անտառային և դաշտային հրդեհների հաճախականությունն ու ինտենսիվությունը:

Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված և հաճախակի դարձած անտառային և դաշտային հրդեհների ահագնացող խնդիրը լուծելու համար, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակը և ՀՀ բնապահպանության նախարարությունը նախատեսում են զարգացնել ազգային պատասխանատու կառույցների տեխնիկական կարողությունները և ստեղծել մշտադիտարկման, կանխարգելման և անտառային հրդեհների մարման համակարգված մեխանիզմներ՝ դերերի և պատասխանատվությունների հստակ տարանջատումով: Ծրագիրը կապահովվի նաև անտառամերձ համայնքների մասնակցությունը: Այն կնպաստի անտառային պաշարների կայուն կառավարմանը՝ նորարարական տեխնոլոգիաների միջոցով կլիմայի փոփոխության ազդեցության մեղման շնորհիվ: Այդպիսի տոխնոլոգիաների օրինակներ են վառելահատիկների և բրիկետների արտադրությունը, ինչպես նաև էներգա-արդյունավետ վառարանները: Այս տեխնոլոգիաները կներդրվեն ագրո-անտառային ոլորտում և հավելյալ կնպաստեն տեղի բնակիչների եկամտի աճին ու աշխատատեղերի ստեղծմանը:

*

ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը գործընկերային կապեր է հաստատում հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ՝ զորակցելով պետություններին դիմակայելու ճգնաժամերին: ՄԱԶԾ-ն խթանում է նաև բնակչության աճը, որ կոչված է բարելավելու յուրաքանչյուր անձի կյանքի որակը: Մնայուն ներկայություն ունենալով մոտ 170 երկրներում և տարածքներում՝ մենք համաշխարհային փորձ և տեղական լուծումներ ենք մատուցում՝ նպաստելով կյանքի բարելավմանը և աջակցելով կայուն պետականության ձևավորմանը: ՄԱԶԾ-ն հաստատվել է Հայաստանում 1993թ. մարտին և աջակցում է կառավարությանն իրականացնելու ազգային զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև հասնելու Կայուն զարգացման նպատակներին:

Նոր համակարգ՝ ռիսկերի կանխարգելման եւ արագ արձագանքման մեխանիզմի ներդրման ուղղությամբ



« Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպել է Հայաստան ժամանած Միացյալ Նահանգների անտառային ծառայության «Այրված տարածքների վերականգնման և արտակարգ իրավիճակների կանխարգելման» աշխատանքային խմբի անդամներ՝ Դանու Բաթրին, Անդրու Բաորին և ծառայության տարածաշրջանային համակարգող Մարիամ Թևազեհին, որոնց ուղեկցել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան տնտեսական և առևտրի գծով պատասխանատու Ռաֆայել Սամբուն: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ արտակարգ իրավիճակների և գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչներ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համապատասխան ինստիտուտների տնօրեններ, Հայաստանում ամերիկյան համալսարանի Հակոբեան բնապահպանական կենտրոնի և բնապահպանության ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Արծվիկ Մինասյանն ամերիկյան կողմին շնորհակալություն է հայտնել օժանդակություն ցուցաբերելու պատրաստակամության և արագ արձագանքման համար և գոհունակությամբ արձանագրել է, որ ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզի հետ՝ մասնագիտական խմբեր հրավիրելու վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները սեղմ ժամկետում վերածվել են կոնկրետ գործողությունների: Ներկայացնելով երկիր մոլորակի վրա և մասնավորապես Հայաստանում բնակլիմայական պայմանների փոփոխության հետևանքով առաջացած բարձր հրդեհավտանգ իրավիճակը և բռնկված հրդեհների հետևանքները՝ ՀՀ բնապահպանության նախարարը նշել է. «Անշուշտ յուրաքանչյուր հրդեհ մեզ համար մարտահրավեր է, բայց բոլոր այն հրդեհները, որոնք անտառածածկ տարածքներում են լինում՝ ավելի ցավալի են դարձնում մեր կորուստները և եթե այստեղ մենք դիտարկում ենք բնության հատուկ պահպանվող տարածքները՝ պարզ է դառնում, թե որքան կարևոր է մեր համագործակցված աշխատանքը: Ստեղծված իրողությունը ցույց է տալիս, որ մենք պետք է վերանայենք և նոր համակարգ մշակենք նախ՝ հրդեհների ռիսկերի կանխարգելման, իսկ հետո՝ արագ արձագանքման մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ: Մյուս կարևոր խնդիրը վերականգնողական աշխատանքների նախաձեռնումն է»:

Բնապահպանության նախարարը շեշտել է նաև հրդեհների հետևանքների ճիշտ գնահատման առաջնահերթությունը, որպեսզի հետագայում վերականգնողական ծրագրերը և աշխատանքները լինեն նպատակային: ԱՄՆ անտառային ծառայության ներկայացուցիչները խնդրել են ներկայացնել հրդեհի հետևանքով առկա և հնարավոր բնապահպանական ռիսկերը: ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի ղեկավար Ժիրայր Վարդանյանը և Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Բարդուղ Գաբրիելյանը ներկայացրել են «Նստրովի անտառն պետական արգելոցում իրենց ղեկավարած ստորաբաժանումների իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները: Ժիրայր Վարդանյանը մասնավորապես նշել է, որ այրված տարածքներում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բույսեր չեն եղել: Էական վնաս է կրել գիհու նոսրանտառը, որը սակայն արգելոցի չայրված տարածքներում լիարժեք առկա է:

Տեղեկացնելով, որ հակահրդեհային աշխատանքների կազմակերպման միջոցառումների հարցերում աջակցություն ցուցաբերելու համար այս տարվա հոկտեմբեր ամսի վերջին ԱՄՆ-ից Հայաստան է ժամանելու ևս մեկ մասնագիտական խումբ՝ Արծվիկ Մինասյանը վստահություն է հայտնել, որ ամերիկյան կողմի հետ համագործակցությունը շարունակական է լինելու և Հայաստանի պատասխանատու կառույցները ապահովելու են բոլոր անհրաժեշտ պայմանները խմբերի լիարժեք և արդյունավետ աշխատանքների համար: Հայաստանում ԱՄՆ դեսպանատան տնտեսական և առևտրի գծով պատասխանատու Ռաֆայել Սամբուն նկատել է, որ սեղմ ժամկետներում մասնագիտական խմբի ձևավորման և Հայաստան բերելու համար մեծածավալ աշխատանք է տարվել, ինչը ՀՀ բնապահպանության նախարարության հետ արդյունավետ համագործակցության արդյունք է: Միացյալ Նահանգների անտառային ծառայության «Այրված տարածքների վերականգնման և արտակարգ իրավիճակների կանխարգելման» աշխատանքային խումբն հրդեհից վնասված տարածքներում ուսումնասիրությունները սկսելու է արդեն սեպտեմբերի 9-ի վաղ առավոտյան:

Գողությունն եւ խուճապահար փախուստ վտանգավոր հետեւանքներով



Սեպտեմբերի 6-ի գիշերը, ժամը 23.00-ի սահմաններում, «Դիլիջան» ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի տարածքի 10-րդ պահաբաժնում, անհայտ քաղաքացին առանց պետիամարանիչների բեռնատար Գազ 66 մեքենայով հարվածել է վերջինիս ճանապարհը փակած «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի ղեկավարի ծառայողական ավտոմեքենային, որը վարել է ազգային պարկի աշխատակից, ծովագյուղ համայնքի բնակիչ Վահե Գուլանյանը: Վնասելով և դուրս մղելով ճանապարհից Վահե Գուլանյանի մեքենան նա դիմել

փախուստի: Միջադեպից հետո «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի տարածքի 10-րդ պահաբաժնում տեղազննումից պարզվել է, որ ապօրինի հատվել է 8 սոճի և 2 թխկի տեսակի ծառ: Կատարված ապօրինի գործողությունների արդյունքում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գույքին և շրջակա միջավայրին հասցվել է զգալի վնաս: Ազգային պարկի տնօրինությունը 07.09.2017 թվականին դիմել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժին՝ գործին համապատասխան ընթացք տալու համար:

Քնության հատուկ պահպանվող նոր տարածք Բյուրականում

յին խումբ՝ հարցին ընթացք տալու համար: Աշխատանքային խումբն արդեն հանդիպել է Բյուրականի աստղադիտարանի տնօրինության հետ, որի ժամանակ նախնական քննարկվել են շուրջ 38 հա տարածքի վրա բնության հատուկ պահպանվող տարածքի ստեղծման հետ կապված հարցերը: Կողմերն առաջիկայում մտադիր են ստորագրել համագործակցության հուշագիր և ձեռնամուխ լինել բնության հատուկ պահպանվող տարածքի հիմնադրմանը:

Մի քանի տարի առաջ ՀՀ ԳԱԱ-ն դիմել էր Հայաստանի Հանրապետության վարչապետին ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի այգին դեմոկրոպարկ հռչակելու առաջարկով: Վարչապետից համապատասխան հանձնարարական էր ուղղվել ՀՀ բնապահպանության նախարարությանը: Հանձնարարականի կատարման նպատակով գերատեսչությունում ստեղծել էր աշխատանքային խումբ: Սակայն մի շարք պատճառներով այն ժամանակ խնդիրը լուծում չէր ստացել: Տեղեկանալով այս մասին՝ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանձնարարել է ստեղծել նոր աշխատանքա-



Մտածել ոչ միայն արվեստի, այլև շրջակա միջավայրի պահպանության բարձր չափանիշներով



Մեկնաբանների 5-ին ՀՀ բնապահպանության նախարարության և Հայաստանի նկարիչների միության միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հուշագիրն ստորագրել են նախարար Արծվիկ Մինասյանը և Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը: Կողմերը, արտահայտելով մտահոգվածություն՝ բնապահպանական խնդիրների լուծման գործում հասարակության լայն շերտերի ներգրավման, էկոմշակույթի ձևավորման հարցերում, ամրագրել են իրենց պատրաստակամությունը՝ ձեռնարկել որոշակի գործողություններ և միջոցներ: Ստորագրման արարողության մեկնարկին ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը տեղեկացրել է, որ հուլիսի 19-ին ՀՀ նկարիչների միությունում անցկացված «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» խորագրով նկարների ցուցահանդեսի ժամանակ միտք է հղացավ նկարիչների հետ համագործակցությունը նոր որակական հարթության վրա դնելու և այն համագործակցության հուշագրով ամրագրելու մասին: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն իր խոսքում նշել է, որ հուշագրի ստորագրումը լավ առիթ և հնարավորություն է, որպեսզի ստեղծագործական միությունը և պետական մարմինը սկսեն համագործակցության իրական գործընթաց՝ նպատակ ունենալով հանրային շահի համարվող բնության պահպանության քաղաքականությունը վերածել նաև կոնկրետ գործողությունների: «Այս տեսակետից չափազանց կարևորում են ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր և այնտեղ մենք տեսանք մեր բնաշխարհին վերբերող լուրջ մտահոգություններ, որոնք արտահայտվել էին կերպարվեստի տարբեր ժանրերի լեզվով, ինչը որպես մշակույթ, ցավոք, մեր երկրում բացակայում է: Մենք համոզված ենք, որ անհրաժեշտ է էկոկրթության և էկոդաստիարակության ձևերով ու մեթոդներով, արվեստի ընձեռնած արտահայտամիջոցներով հանրությանը մատուցել առավելագույնը՝ ցույց տալու համար, թե որքան վտանգված է երկիր մոլորակը և որքան հրատապ ու կենսական է այսօր մարդու հոգատար վերաբերմունքը բնության հանդեպ, աշխարհի որ ծայրում, առավել ևս՝ Հայաստանի որ վայրում էլ որ լինի»,-

նշել է Բնապահպանության նախարարը և կարևորել մարդկանց ուղերձներ հղելով, շրջակա միջավայրի խոցելիության վերաբերյալ տեղեկատվության հասցնելը, ինչը որ մի կողմից ստեղծագործություն է, մյուս կողմից՝ պետական քաղաքականություն բնության հանդեպ համընդհանուր պատասխանատվությունը մեծացնելու գործում: Ըստ Արծվիկ Մինասյանի՝ այս հուշագրի առաջնալիքն նպատակներից մեկն այն է, որ այն երկար ժամանակ լինի կենսունակ, անկախ նրանից, թե ով կղեկավարի ոլորտը: Մեր երկու կառույցների միջև համագործակցությունը լիարժեք և արդյունավետ դարձնելու համար կներգրավվեն նաև դրամաշնորհային միջոցներ, ինչը իր հերթին կնպաստի շրջակա միջավայրի պահպանության հանրային գիտակցության բարձրացման գործողություն-



ներին, մյուս կողմից էլ՝ մշակութային գործիչներին հնարավորություն կընձեռնի մտածել ու ստեղծագործել շրջակա միջավայրի պահպանության բարձր չափանիշներով: Արծվիկ Մինասյանը կրկին շեշտելով, որ էկոդաստիարակությունը և էկոկրթությունը գերատեսչության վարած քաղաքականության կարևորագույն ուղղություններից են, տեղեկացրել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն աշնանը ներկայացնելու է էկոլոգիական կրթության, դաստիարակության զարգացման ռազմավարությունը, որի ավարտից հետո Հանրապետությունում կիրականացվեն արշավներ և կրթական ծրագրեր, որոնցում էական դերակատարում կունենա նաև Եկտրիկների միությունը: Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը նշեց, որ նկարիչներն ուրախ են, որ կարող են ինչ-որ ձևով նպաստել երկրի բնապահպանական խնդիրների լուծմանը: «Մոլորակը վտանգված է և Հայաստանը կարծես դրա կիզակետում է, ցավալի է տեսնել, թե ինչպես են մարդու ձեռքերով, կամ բնության աղետների պատճառով ոչնչանում կանաչ տարածքները, որոնք այնքան սակավաթիվ են Հայաստանում»:

• Մսածել ոչ միայն արվեստի, այլև Երջակա միջավայրի դահողանության բարձր չափանիշներով

Սկիզբը՝ էջ 51

Սկարիչների միության նախագահը նշել է, որ արվեստագետները, ինչպես մեր բոլոր քաղաքացիներն, անմասն չեն մնա բնապահպանական խնդիրների լուծման գործընթացից և ներկայում կան նկարների ֆոնդեր, որոնց վաճառքից որոշակի գումարներ կարող են ուղղվել բնապահպանական խնդիրների լուծմանը: Հուլիսի 24-ը՝ ՀՀ բնապահպանության նախարարությունն իր լիազորությունների սահմաններում օժանդակելու և աջակցելու է

խնդիրների վերահսկման, հանրայնացման, լուծման առաջարկների նպատակով նկարիչների միության նախաձեռնած միջոցառումներին, (ցուցահանդեսներ, անհատական ցուցադրություններ, քննարկում-հանդիպումներ և այլն), դրանց հանրայնացման գործին: Հուլիսի 24-ը համագործակցություն է իրականացվելու նաև էկոլոգիական մշակույթի ձևավորմանը նպաստող այլ գործողություններով:

Հրդեհների պատճառած վնասի չափերի իմացությունը եւս կարելու է

ԱՄՆ-ն Հայաստանին կօգնի Բյուրականում և «Խոսրովի անտառ» արգելոցում հրդեհների հասցրած վնասը գնահատելու հարցում: Այս մասին սեպտեմբերի 6-ին լրագրողների հետ զրույցում, ասաց ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: Նրա խոսքով՝ Բյուրական գյուղի մոտ հրդեհից վնասված տարածքի հստակ չափը պետք է պարզել: Այն գրեթե ամբողջությամբ մարել են, սակայն հրդեհների օջախում մասնակի կամ ամբողջությամբ պահպանված կոզյակներ են մնացել: Նախնական տվյալներով՝ այստեղ շուրջ 20 հեկտար տարածք է այրվել:

Բնապահպանության նախարարի հրամանով օգոստոսի 26-ից թույլատրված է որոշ կենդանատեսակների սիրողական որսը: «Խոսրովի անտառ» արգելոցում տեղի ունեցած հրդեհի հետևանքները հաշվի առնելով, նախարարությունը փոփոխություն կատարեց հրամանի մեջ և արգելեց որսը արգելոցին հարակից որսահանդակներում, որպեսզի չվնասվեն արգելոցից հարկադրաբար հեռացած վայրի կենդանիները:

17 միլիոն 310 հազար դրամ՝ որսի թույլտվության համար

2017 թվականին բնապահպանության նախարարությունը յոթ որսորդական միավորումների միջոցով իրացրել է սիրողական որս կատարելու 2164 թույլտվություն, նախարարության նպատակային ֆոնդին վճարվել է 17 միլիոն 310 հազար դրամ:



2016 թվականին սիրողական որս իրականացնելու համար տրամադրվել էր 1065 թույլտվություն, նախարարության նպատակային ֆոնդին վճարվել էր 8 միլիոն 520 հազար դրամ:

Արծվիկ Մինասյանը կամփոփի բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքները

ՀՀ կառավարությունը ներկայացրել է Հայաստանի տնտեսության մի շարք ոլորտներում իրականացված մեկ տարվա աշխատանքների արդյունքների վերաբերյալ հակիրճ հաշվետվությունը: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը Սեպտեմբերի 26-ին ժամը 13:00-ին հրավիրված մամուլի ասուլիսում կամփոփի բնապահպանության ոլորտում կատարված աշխատանքները, գերատեսչությունում մեկնարկած բարեփոխումների ընթացքը, սկսված ծրագրերի արդյունքները և նախատեսվող միջոցառումները:

Որոնք են մեր ագրարային եւ բնապահպանական քաղաքականության բացերը



Վերջերս Թեքեյան միության սրահում տեղի ունեցավ Գյուրավ Էկոլոգիական Հիմնադրամի «Հայստանում արտադրական աճին ուղղված հողերի կայուն կառավարման ծրագրի» շրջանակներում կազմակերպված աշխատաժողով՝ նվիրված «Ագրարային և բնապահպանական քաղաքականության առկա բացերը» թեմային: Աշխատաժողովին մասնակցում էին ՀՀ կառավարության աշխատակազմի, Բնապահպանության և Գյուղատնտեսության նախարարությունների, Ագրարային համալսարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև՝ ֆերմերներ, այգեգործներ և հողագործներ:

Ծրագրի համակարգող Արմեն Դանիելյանի խոսքով՝ «այս շահագրգիռ քննարկումներով փորձելու ենք ամբողջացնել և հստակեցնել մեր սակավահող երկրում ագրոհամակարգի և բնապահպանության վերաբերմունքը և առաջիկա անելիքները՝ հողերի ճիշտ կառավարման խնդրին: Անչափ կարևոր է հասականալ այն բոլոր բաղադրիչները, որոնք կարող են այս կամ այն չափով առնչվել նված ծրագրին»: Մինչև այս ծրագրերի նպատակների ու ակնկալվող արդյունքների մասին խոսելը, որն ի դեպ, ծավալուն թեմա է, և որի տարբեր ասպեկտների մասին առաջիկայում մեր էլեկտրոնային թերթում և մյուս կայքերում կլինեն առավել խորքային վերլուծություններ, ճիշտ կլինե՞ր նախ ուշադրության առարկա դարձնել մեր ագրարային քաղաքականության առանցքային հոգսերից մի քանիսը: Բոլորս էլ գիտենք, որ հողի ոչ ճիշտ տնօրինման արդյունքը լինում է այն, որ վտանգավոր չափերով տեղի է ունենում գյուղատնտեսական մշակովի հողատարածքների աղտոտում և աղակալում, որը պայմա-

նավորվորված է պարարտանյութերի և թունաքիմիկատների մեծ քանակությունների կիրառմամբ, որոնց մեջ ինչպես հայտնի է, առկա են սնդիկի, կապարի և ծանր մետաղների մեծ չափաբաժիններ: Այնուհետև, տասնամյակներ շարունակ կրծողների և մոլախոտի դեմ պայքարում օգտագործվում են պեստիցիտներ, որոնք կուտակվելով հողում երկար ժամանակ պահպանվում են այնտեղ և դրանից սկիզբ են առնում հողի էրոզիայի պրոցեսները: Յուրաքանչյուր տարի աշխարհում շորջ 6 միլիոն հա հող անմշակ մնալու և անխոհեմ տնօրինվելու հետևանքով դառնում է անապատ: Էլ չենք խոսում անտառների ոչնչացման զարհուրելի իրողության մասին, որնք արդեն նպաստում են հողածածկի բիոզեն կազմի կտրուկ փոփոխմանը: Սրանք հարցի մի կողմն են, բայց կա նաև մյուսը՝ առավել կարևոր մասը՝ ագրոհամակարգում տարվող քաղաքականությունը: Վերջերս ՀՀ կառավարության միստում վարչապետ Կարեն Կարապետյանը հնչեցրեց թվեր, որոնք լուրջ մտահոգության առիթ են տալիս թե ագրարային և թե բնապահպանական տեսակետից: Ըստ վարչապետի՝ «հողային հաշվեկշռի տվյալներով հանրապետության ոռոգելի հողատարածքները կազմում են շուրջ 208 հազար հեկտար: Բայց վերջին տարիներին փաստացի ոռոգվող հողատարածքները տատանվում են 90-130 հազար հեկտարի սահմաններում. Կատարված վերլուծություններից հետևում է, որ ոռոգվող և ոռոգելի հողատարածքների այդպիսի տարբերությունը պայմանավորված է հողային և ջրային ռեսուրսների, ինչպես նաև ոռոգման ենթակառուցվածքների հնարավորությունների ոչ արդյունավետ օգտագործմամբ, ինչն անթույլատրելի է գյուղացիական տնտեսությունների զարգացման ծրագրերի պայմաններում»: Հիրավի, տագնապի առիթ սովոր թվեր, մանավանդ որ՝ ընդհանուր հողատարածքի շրջանառությունից դուրս մնացած շուրջ 24,5 հազար հա բաժին է ընկնում մեր երկրի կենսատու գոտուն՝ Արարատյան դաշտավայրի հողերին: Եթե սրան էլ ավելացնենք այն, որ հայ հողագործների մի սովոր հատված այլևս երկրում չէ, ամեն բան պարզ կդառնա ինքնաբերաբար, իսկ երկրում մնացած հողամշակի համար էլ տարեց տարի հողագործությունը դառնում է նվազ եկամտաբեր զբաղմունք: Որախալի է, որ ՀՀ կառավարության կողմից ներկայումս գործի դրված ռազմավարությունը անհամեմատ ավելի իրատեսական է, քան եղել է երբևիցե: Երկրներ ծարունակ վատ հասցեականությամբ և կոռուպցիոն ռիսկերով լի սուբսիդավորումը հազիվ թե ավելի լավ արդյունքների հանգեցնե: Եվ այսօր արդեն խնդիր է դրվում արմատապես փոխել մոտեցումները անմշակ և աղակալված հողատարածքների մշակության հանդեպ, կարգի բերել բոլոր, առաջին հերթին ջրամատակարարման ենթակառուցվածքները, կիրառել այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք էապես կնպաստեն անմշակ հողակտորներին կրկին կյանք պարգևելու գործին:

• Հողին վաճառքները և փոխառությունները և վիճակը շտկելու փորձերը

Սկիզբը՝ էջ 71



Խթանման հիմքում, փաստորեն, դրվելու է կոնկրետ մոտեցումների մոդելը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ աշխատատեղեր և ամենակարևորը՝ նախաձեռնող հողագործի առջև կանաչ լույս վառելը: Համեմայնդեալ, վարչապետը հավաստիացնում է, որ վերջ է դրվելու հողագործին աջակցելու իմիտացիոն գործելաոճին և ոլորտն առաջնորդվելու է «աշխատողին շալե շափիկ» կենսափիլիսոփայությամբ: Իրականացվելիք քայլերի մեջ, բնականաբար, առաջնային նշանակություն կունենա հարկային բեռի թեթևացումը տարբեր ձևերով ու գործիքներով: Այստեղ խնդիրը բարդանում է նաև նրանով, որ մինչև այս պահը հստակեցված չէ «անմշակ հողատարածք» հասկացողությունը: Ո՞ր հողատարածքներն են, որ վստահաբար կարող ենք անվանել չմշակվող, ի՞նչ պարբերականությամբ հողը մշակելու դեպքում կարելի անվանել այդպիսին և այլն: Այնուհետև, սեփականություն հանդիսացող հողի խնդրում ո՞րոնք են պետության պարտավորությունները և ո՞րոնք՝ սեփականատիրոջ: Տասնյակ հազարավոր մարդիկ համարվում են հողի սեփականատերեր, բայց հայտնի պատճառներով բացակայում են երկրից: Ի՞նչպիսի քաղաքականություն է կիրառվելու նմանատիպ դեպքերի համար և այլն: Պարզ է մի բան. առանց դիֆերենցված մոտեցումների և օրենսդրական նոր կարգավորումների այս հարցերը խելամիտ լուծումներ չեն ունենա: Թերևս սա է պատճառը, որ հողագործին շահագրգռող ծրագրերի մեջ հայտնվել են հարկային առավել նպաստավոր տոկոսադրույթներ՝ ջրամատակարարման, լիզինգով գյուղտեխնիկա, պարարտանյութեր, թունաքիմի-

կատներ ձեռք բերելու, հակակարկտային ծառայությունների մատուցելու և այլ դեպքերում: Փաստորեն, պետությունը իր վրա կվերցնի հարկերի զգալի բեռը, հողագործին թողնելով միայն դրանց 2-3%-ը: Ինչպես հավաստիացնում է Կառավարությունը՝ Էապես կփոխվի վերաբերմունքը այն դեպքերում, եթե հողագործը ստանձնի անմշակ կամ աղակալած հողակտորների, այսինքն՝ լոկալ մելիորացիայի, կոնկրետ մրգերի, պտուղների և բանջարաբոստանային կուլտուրաների մշակման պատասխանատվությունը: Բնականաբար, անհնար է այս բոլոր քայլերը պատկերացնել առանց բնապահպանների աջակուրջ հսկողության և խորհրդատվության: Բնապահպանները այս ձեռնարկներում պետք է լինեն հուսալի ու սրտացավ գործընկերներ և օգնեն հողօգտագործողներին գրագետ վարել իրենց տնտեսությունը, որպեսզի հողագործը վնաս չհասցնի թե իր բիզնեսին և թե մեր ազգային մեծագույն հարստությանը՝ հողին: Հողերի վերականգնման այս ծրագիրը, ինչպես նշեց ծրագրի համակարգող Արմեն Դանելիայան սեմինարի ավարտին, լուրջ աջակցություն է լինելու մեր սակավահող երկրի ամենակենսական ոլորտներից մեկի՝ ագրոհամակարգի վտիտ ուսերը շտկելու և նրա զարգացմանը նպաստելու գործին: «Բնություն» էլեկտրոնային թերթը այսուհետև պարբերաբար անդրադառնալու է ծրագրի իրականացման ընթացքին, նրա բաղադրիչներին, ծագած պրոբլեմներին և իհարկե՝ արդյունքներին:

Մանվել Սկրտչյան

Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի
խմբագիր՝ Մանվել Սկրտչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517